
ՀԱՅԵՐԵՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ ՆՈՍՏՐԱՏԻԿ ԼԵՁՈՒՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ ՄԵՋ ԵՎ ՀԵՏԱԳԱ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Լեզուների հեռավոր ցեղակցության հարցը ոչ պակաս չափով եղել է պատմահամեմատական, մանավանդ համեմատական-տիպաբանական լեզվաբանության մասնագետների ուշադրության կենտրոնում, թեև այն ավելի բուռն ձևով երևան է գալիս միայն XX դ. կեսերից հետո, որը շարունակվում է մեր օրերում:

Այդ հարցն արծարծվել է «լեզվաընտանիքների» միջև մեծ մասամբ բառային, մասամբ նաև ձևային հարաբերակցության բացահայտման նպատակով: Ներկայումս խոսվում է, այսպես կոչված, «մեծ ընտանիքների» (մակրոընտանիքների) մասին: Տարբերում են արևելանոստրատիկ (ուրալյան, դրավիդյան, ալթայյան) և արևմտանոստրատիկ (աֆրասիական, հնդեվրոպական, քարթվելական) լեզուներ: Մրանից բացի՝ առաջարկվում են այլ «մեծ ընտանիքներ» (մակրոընտանիքներ)՝ պալեոեվրասիական (չինկովկասյան), որ ներառում է չինտիբեթական, հյուսիսկովկասյան (նախյան-դաղստանյան, արխագադդեական, խուռաուրարտական) լեզուները, խաթերենը (խեթերենի ենթաշերտ լեզուն), ենիսեյան լեզուները (եթե ոչ նաև բասկերենը և բուրուշասկի լեզուն), և ամերինդկական (հնդկացիական), որ ընդգրկում է Ամերիկայի բնիկների լեզուները՝ բացառությամբ էսկիմոսալեուտյան լեզուների:

Լեզվական նյութի համեմատությունը կատարվում է մեծ մասամբ հնչյունաբանության և արմատաբանության, մասամբ քերականության մակարդակով՝ առավել ուշադրության առարկա դարձնելով հնչյունական համակարգը և արմատի կառուցվածքը (ձևային կազմը):

Հ. Պեդերսենը, ի տարբերություն նախորդ ուսումնասիրողների, առաջին անգամ (1903 թ.) առաջ է քաշում ոչ թե երկու, այլ մի քանի լեզվաընտանիքի լեզուների ուսումնասիրության գաղափարը՝ մասնավորապես նկատի ունենալով ուրալալթայյան, հնդեվրոպական, աֆրասիական լեզվաընտանիքի լեզուները: Ըստ այսմ՝ հիմք է դրվում բառի բուն իմաստով լեզուների ուսումնասիրության նոստրատիկ տեսությանը¹:

Անցյալ դարի 60-ական թվականներին ռուս տաղանդավոր լեզվաբան Վ. Մ. Բլիշ-Սվիտիչը նպատակ է դնում վերականգնելու նոստրատիկ նախալեզուն, որը, անշուշտ, գիտական մեծ էրուդիցիայի վկայություն է: Այնուհետև նա կազմում է սեմաքամյան (սեմ.-քամ.), քարթվելական (քարթվ.), հնդեվրոպական (հե.), ուրալյան (ուրալ.), դրավիդյան (դրավ.) և

¹ *St u* "Zeitschrift für Deutschen Morgenländischen Gesellschaft", Berlin, № 57, 1903.

ալթայյան (ալթ.) լեզուների բառային (բառարմատային), ինչպես նաև ձևաբան (բառաձևային) միավորների համեմատական քարտարանը²: Եվ վերջինիս տվյալների օգտագործմամբ նա գրեց իր հայտնի աշխատությունը՝ նվիրված հնդեվրոպական ու սեմական լեզուների շփումներին, որն ունեցավ բացառիկ նշանակություն այդ բնագավառում հետագա ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելու տեսանկյունից³: Իսկ ավելի ուշ լույս է տեսնում հեղինակի համեմատական բառարանը (երկու հատորով, միասին՝ 297 էջ՝ չհաշված ցանկերը)⁴: Մեր հաշվումներով՝ բառարանի երկու հատորում տեղ գտած 353 բառահոդվածից 175-ի դեպքում կարելի է առանձնացնել հայերենի զուգահեռներ: Վերջիններիս որոշակի մասը, ոչ անկախ Յու. Պոկորնու բառարանից⁵, ընդգրկված է ինչպես հեղինակի՝ Բլիշ-Սվիտիչի, այնպես էլ գրքի հատորների լույս ընծայման վրա աշխատած գիտական կոլեկտիվի ջանքերով, որն էլ ժամանակին քննված և լրացված է Գ. Ջահուկյանի կողմից⁶: Հետագայում Բլիշ-Սվիտիչի քարտարանի հիման վրա պատրաստվում է 3-րդ հատորը, որը պարունակում է 25 բառահոդված (101 էջ՝ չհաշված ցանկերը)⁷: Դրանցից առնվազն 12-ի դեպքում ևս հնարավոր է բերել հայերեն զուգահեռներ: Բառարանի առաջին երկու հատորի հայերեն նյութը, ինչպես նշեցինք, տեղ է գտել Գ. Ջահուկյանի աշխատություններից երկուսում⁸, իսկ 3-րդ հատորինը, թեև այն լույս է տեսել 1984 թ., դուրս է մնացել⁹:

Այս ամենով հանդերձ, կարծում ենք, որ հնարավոր է կատարել նոր հավելումներ, որոշ ճշգրտումներ, մանավանդ եթե նկատի ենք ունենում հայերենի բառապաշարի այն մասը, որը կա՛մ առհասարակ չկա հրապարակի

² В. М. Иллич-Свитыч. Материалы к сравнительному словарю ностратических языков (индоевропейский, алтайский, уральский, дравидский, картвельский, семитохамитский). – В кн.: Этимология, 1965. М., 1967, с. 321–374; Ն ու յ ի ի՝ Соответствия смычных в ностратических языках. – В кн.: Этимология, 1966, М., 1968.

³ В. М. Иллич-Свитыч. Древнейшие индоевропейско-семитские контакты. – В кн.: Проблемы индоевропейского языкознания. М., 1964. *Ա. Դոկոպոսյան, Ա. Բումարդի և ուրիշների նույն բնույթի աշխատանքներին անդրադարձալու ենք հետագայում՝ առանձին:*

⁴ *Տե՛ս* В. М. Иллич-Свитыч. Опыт сравнения ностратических языков (семитохамитский, картвельский, индоевропейский, уральский, дравидийский, алтайский): Введение. Сравнительный словарь (b- ҕ), (*այսուհետև՝* Иллич-Свитыч, 1971, *աղբյուրը կնշվի մեջբերմանը կից*), М., 1971; Ն ու յ ի ի՝ Опыт сравнения ностратических языков: Сравнительный словарь (l - z), Указатели. М., 1976 (*այսուհետև՝* Иллич-Свитыч, 1976, *աղբյուրը կնշվի մեջբերմանը կից*):

⁵ J. Pokorny. Yndogermanischer etymologisches Wörterbuch. V. 1–2, Bern – München, 1959.

⁶ *Տե՛ս* Գ. Բ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (*այսուհետև՝* Ջահուկյան, 1987, *աղբյուրը կնշվի մեջբերմանը կից*), Երևան, 1987, էջ 69–72:

⁷ *Տե՛ս* В. М. Иллич-Свитыч. Опыт сравнения ностратических языков. Сравнительный словарь (p - q), (по карточкам автора). М., 1984.

⁸ *Տե՛ս* Գ. Բ. Ժապչյան. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982; Ն ու յ ի ի՝ Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան:

⁹ Նկատի ունենք Գ. Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» գիրքը, որի գրականության ցանկում նշվում են Բլիշ-Սվիտիչի աշխատության միայն 1–2-րդ հատորները:

վրա եղած համապատասխան բառարաններում, կա՛մ գտնում ենք հայերենի բարբառներում:

Սույն աշխատանքում անդրադառնում ենք Իլիչ-Սվիտիչի «Ստուգաբանական բառարանի» այն բառահոդվածներին, որոնցում այս կամ այն կերպ տեղ են գտել հայերենի տվյալները՝ իբրև հե. ցեղակցության մի լեզվի համեմատելի միավորներ՝ ընդ որում ավելացնելով 3-րդ հատորի նյութերը: Այնուհետև դրանք փորձել ենք լրացնել հայերենի նոր տվյալներով: Նման բնույթի համեմատաբար ամբողջական քննություն մինչև այժմ չի կատարվել մեզանում առհասարակ, մասնավորապես հայոց լեզվի նախագրային շրջանի պատմությանը, ինչպես նաև համեմատական-տիպաբանական քննությանը նվիրված աշխատություններում: Ուստի առանձին հարց է այն, թե ինչպիսի լրացումներ կարելի է կատարել հայերենի նյութի հետ կապված՝ նկատի ունենալով վերջինիս ոչ միայն ընդհանուր գրական տարբերակը, այլև բարբառները:

Սույն բառարանում հե. լեզուների, ընդամենն նաև հայերենի տվյալները, ինչպես նշեցինք, հիմնականում վերցված են Յու. Պոկոնոնու ստուգաբանական բառարանից: Սա նշանակում է, որ այստեղ նույնպես հայերեն շատ բառեր կամ արմատներ քննության են առնված գիտության այն մակարդակով, որ ուներ համեմատական լեզվաբանությունը մինչև անցյալ դարի 50–60-ական թվականները: Իսկ դրանից հետո այս բնագավառում, ինչպես հայտնի է, շատ բան է փոխվել՝ ի հաշիվ գիտական նոր ձեռքբերումների, տարբեր կարգի վերանայումների, լրացումների, ճշգրտումների և այլն: Այս դեպքում հաշվի ենք առել նաև նորագույն տվյալները:

Ըստ այդմ՝ առաջ են գալիս նոր խնդիրներ՝ կապված ոչ միայն լեզվական նյութի մակարդակային քննության, այլև վերջինիս հիմքում դրվելիք սկզբունքների և մոտեցումների մշակման և կիրառման հետ: Ուստի նախ՝ կատարում ենք արմատաբանական վերլուծություն՝ համեմատության եզր ընդունելով Իլիչ-Սվիտիչի վերականգնած նորոտրատիկ նախաձևը (նոստր. նշումով), այնուհետև՝ հղում ենք վերջինիս բառարանին և Գ. Ջահուկյանի աշխատություններին: Եթե հղումը տրվում է միայն Իլիչ-Սվիտիչի բառարանին, նշանակում է, որ գործ ունենք հայերենի նյութի լրացուցիչ ընդգրկման հետ: Ստորև անդրադառնում ենք նոստրատիկ բառարանի այն բառահոդվածներին, որոնցում տեղ են գտել նաև հայերենի տվյալները, ու ըստ այդմ կարելի է անել որոշ լրացումներ և ճշգրտումներ¹⁰:

1. Նոստր. baHli «վերք, ցավ»(?). հե. bhehl- «վերք, ցավ» ~ ալթ. [bāli «վերք»](?) (Иллич-Свитыч, 1971, 74–175): Հմմտ. հայ. բող-ջ «վերք. պալար», (բրբռ.) բող-ջ-ոց «վերք. պալար», բող-ջ-ոցվիլ «վրան վերքեր դուրս տալ» և այլն:

5. Նոստր. balqa «շողալ, փայլել». սեմ.-քամ. brq «փայլել. կայծակ» ~ քարթվ. berq- «շողալ, փայլատակել» ~ հե. bhelg- / bhleg- «շողշողալ, փայլել» ~ ալթ. [balk- «շողալ, փայլատակել»] (Иллич-Свитыч, 1971, 174–175): Հմմտ. հայ. փայլ-ել «լույս տալ, ճառագել», այլև (բրբռ.) բլ-

¹⁰ Բառահոդվածների սկզբում պահպանում ենք հիշյալ բառարանի համարակալումը՝ բառարանագրական ընդհանուր կարգը չխախտելու նպատակով:

խտ-ալ «(ուժեղ) փայլել. փայլատակել, բռնկվել», փիլ-կստալ «փայլել, փայլփլել»:

7. Նոստր. bara «մեծ. լավ». հե. bher- «լավ. մեծ» ~ ուրալ. para «լավ» ~ դրավ. [par- «մեծ»] ~ ալթայ. [bara «շատ»]: Հմմտ. հայ. բար-ի «լավ», բարուք «հարմար, բարվոք» (ար <*r) (Иллич-Свитыч, 1971, 175–178, հմմտ. Ջահուկյան, 1987, 72)¹¹:

8. Նոստր. bari «վերցնել». սեւ.-քաւ. br «բռնել, որսալ» ~ հե. bher- «վերցնել, բերել, կրել» ~ դրավ. per- «ի մի բերել, հավաքել» (?) ~ ալթ. bari- «(բռի մեջ) առնել»: Հմմտ. հայ. բերեմ «բերել, կրել» (Иллич-Свитыч, 1971, 176, հմմտ. Ջահուկյան, 1987, 72, այլն նույնի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, 125–26):

9. Նոստր. berg(i) «բարձր». սեւ.-քաւ. brg «բարձր» ~ քարթվ. bžg-e «բարձր»(?) ~ հե. bheroh- / bhreoh- «բարձր» ~ ուրալ. [p(e)r/-k/ «բարձր»] ~ դրավ. pē- «բարձր»(?): Հմմտ. հայ. բարձ-ր «բարձր», բերձ «(բարձրա)բերձ» (Иллич-Свитыч, 1971, 77, հմմտ. Ջահուկյան, 1987, 72, այլն՝ 2010, 121, 126):

11. Նոստր. biČa «փոքր(իկ)». ուրալ. [piČa «փոքր(իկ)»] ~ դրավ. pīc- / picc- «փոքր(իկ), կարճ» ~ ալթ. biča «փոքր(իկ)» (Иллич-Свитыч, 1971, 178–179): Հմմտ. հայ. փոք-ր «ոչ-մեծ. փոքր», այլն (բրբռ.) պիճ-իկ, պուճ-ուր «փոքր(իկ). մանր(իկ)», թերևս - նան (բրբռ.) փիճ-խա «փոքր(իկ)», փթ-խել «մանրել, փշր(վ)ել», փթթել (<փթիթ <*փիթ- փիթ-ել) «բացվել, մաս-մաս լինել. ծաղկել», փթուր «մանր կտոր, փշուր» և այլն:

12. Նոստր. bičŋ «կոտրել». սեւ.-քաւ. bs- / bd- «կոտրել, մանրել» ~ քարթվ. bic- «կոտրել, բրդել» ~ հե. peis- «փշրել, ճզմել» ~ դրավ. pīc- «մանրել, կճպել, տրորել»: Հմմտ. հայ. փուխ-ր, փխ-րուն «մանր. նուրբ», փշ-ուր «կտոր, մանր(մաս)», փս-որ «մանր(ացած)»:

14. Նոստր. bil' «գոռալ». քարթվ. bir «երգել» ~ հե. bhel- «խոսել. մոնչալ, ոռնալ» ~ դրավ. pi- «բղավել. գոռալ»: Հմմտ. հայ. բղ-աւել «կանչել, գոռալ», թերևս նան (բրբռ.) բլ-բլ-ալ «թոթովել, խոսել»:

16. Նոստր. bolŋi «աճել (բույսի համար ասված)». սեւ.-քաւ. 'bl «տերև, (աճած) բույս» ~ հե. bhelŋ- / bhleŋ- «բույս, տերև, ծաղիկ» ~ դրավ. [poli- «աճել, բուսնել»]: Հմմտ. հայ. բողբոջ (<բող-) «ծիլ, ընձուղ, սերունդ» (արմատի կրկն.), թերևս նան (բրբռ.) բուղ-ուն (իմա՝ բուղուն քշել «հոռոթի աճել») (Иллич-Свитыч, 1971, 181–182, այլն՝ Ջահուկյան, 2010, 134):

¹¹ Բլիշ-Սվիտիչը տարբերում է ոչ միայն հե. *bher- «լավ, մեծ» (> հայ. բարի «լավ», բարուք «հարմար, բարվոք») [նոստր. bara «մեծ, լավ»] և հե. *bher- «վերցնել, կրել, բերել» (> հայ. բերեմ «բերել, կրել») [նոստր. bari «վերցնել»] (հմմտ. Ջահուկյան, 1987, 72), այլն հե. *bher- «երեխա. Ջավակ» (> հայ. բեր. հմմտ. (հուն. φέρμα «պտուղ») [նոստր. br «երեխա. Ջավակ»] (Л. у. у. ֆ. - հ. 2. 0. 3. ֆ., 1971, 175–77, 194–95): Նոստրատիկ համեմատությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու հե. ծագում ոչ միայն հայ. բեր «զավակ, պտուղ» (նան բեր-ք «արդյունք, ծնունդ, բերք» և այլն), այլն բար «պտուղ, զավակ» (նան բար-իք «արդյունք, ստացվածք, բարիք». հմմտ. բերք ու բարիք «ստացվածք, արգասիք» և այլն):

17. Նոստր. bongՊ «հաստ. ուռչել, փքվել». հե. bhenǵh- «հաստ, պինդ» ~ ուրալ. пуґка /porґka «հաստ. փքված» ~ դրավ. poᐁk- «փքվել, եռալ» ~ ալթ. [boŋ «հաստ, մեծ»]: Հմմտ. հայ. բուն-ք (իմա՝ հունք ու բունք «ամբողջը. լրիվ եղածը»):

18. Նոստր. bor'a «գորշ, մուգ դարչնագույն». հե. bher-, bhe-bhru- (bhreu-) «գորշ, դարչնագույն» ~ ալթ. bor'a «մոխրագույն, գորշ»: Հմմտ. հայ. բորբոս (բոր-բոս. հմմտ. բոր և բոս) «մզված. մզոտություն»:

19. Նոստր. buHi «աճել. ծագել». հե. bheuH «աճել. լինել» ~ ուրալ. буґе «ծառ» ~ ալթ. бӱи «լինել»: Հմմտ. հայ. բուս-անիմ (<բոյ-ս) «աճել, վերընձուղվել. բուսնել» (Иллич-Свитыч, 1971, 184 – 185, հմմտ. Ջահուկյան, 1987, 72, այլն՝ 2010, 135):

21. Նոստր. bura «ծակել. շաղափել». սեմ.-քամ. b(w)r «շաղափել. քանդել. (բացված) անցք» ~ քարթվ. [br(u)- «պտտել. խաղացնել»(?)] ~ հե. bher- «շաղափել, փորել, քանդել» ~ ուրալ. pura «գործիք (շաղափելու). շաղափել, ծակել» ~ դրավ. pō «անցք. բացվածք» ~ ալթ. [bura- «պտտել, փորել»]: Հմմտ. հայ. բիր «փորիչ», բրեմ «քանդել, փորել», բրիչ «թոխը, թակուջակ», բերան «ուտելու անցք» (Иллич-Свитыч, 1971, 186–187, հմմտ. Ջահուկյան, 1987, 72, այլն՝ 2010, 126, 129):

23. Նոստր. bur «ձյան (ավազի) փոթորիկ, բուք». սեմ.-քամ. bwr- «(ավազի) փոթորիկ, քամի»(?) ~ հե. bher- «փոթորիկ. փոթորկել» ~ ուրալ. pur- «պտտելով (ձյուն) բարձրացնել», purk «բուք, բորան» ~ ալթ. bur / bora «բուք, փոթորիկ»: Հմմտ. հայ. բուռն «ուժգին, սաստիկ. հախուռն» (Иллич-Свитыч, 1971, 188–189): Հմմտ. նաև բու-ք «ձյան սաստիկ քամի», բոր-ան (բուք ու բորան) «ձյունախառն փոթորիկ» (և/ր տարբերակ-մամբ):

24. Նոստր. bur'a «եռալ, փոթորկել». սեմ.-քամ. br- «եռալ»(?) ~ հե. bhreu- «եռալ, փոթորկել» ~ ուրալ. pura-/porᐁ- «փոթորկել, եռալ» ~ դրավ. [puᐁ- «եռալ»]: Հմմտ. հայ. բլթբլթալ «եռալու ձայն հանել» (արմ. կրկն.՝ թ աճականով), թերևս նաև քլթքլթալ //իլթիլթալ «նույնը»(?):

29. Նոստր. blH (այլն bl') «փչել. ուռցնել». քարթվ. bē- / bēl- «փչել. ուռցնել. (փչել-լով) բարձրացնել» ~ հե. bhelh-/bhleh- «փչել. ուռցնել. բարձրանալ» (Иллич-Свитыч, 1971, 193–194. տե՛ս նաև էջ 193-ի տողատակի ծանոթագրությունը): Հմմտ. հայ. (բրբռ.) բլ-կ-նալ «(լցվելով) ուռչել, բարձրանալ» [հուն. φολλός (-λλ- <*ln-) «memb. vir.»] (?):

30. Նոստր. bnt «կապել, միացնել». սեմ.-քամ. bn «կապել փաթաթել» ~ հե. bhendh- «կապել. ագուցել» (Լսսոփ-հՉոՅոփ, 1971, 194): Հմմտ. հայ. պինդ, պնդել «ամուր. ամրացնել, կապել» (Ջահուկյան, 2010, 637):

32. Նոստր. br «երեխա, մանուկ». սեմ.-քամ. [*bir/*bin] «երեխա, մանուկ» ~ քարթվ. [ber- «երեխա, մանուկ»] (?) ~ հե. bher- «երեխա, մանուկ»: Հմմտ. հայ. Բեր (հուն. φέρμα «պտուղ») (Иллич-Свитыч, 1971, 194–195): Այլն՝ բեր-ել «ծնել», բեր-ք «(երեխա՝ զավակ) բերելը, ունենալը. ծնունդ».

(*հմմտ.* բերքից ընկնել՝ կտրվել «ծնելու ընդունակությունից զրկվել, ամլանալ»)»¹²:

33. *Նոստր.* calu «ճեղքել. կիսել»: *սեմ.-քամ.* sl- «ճեղքել. կիսել. սայր»: *քարթվ.* cel- «հնձել» ~ *հե.* (s)kel- «ճեղքել» ~ *ուրալ.* sale- «կիսել. ճեղքել» ~ *դրավ.* cal- «ճեղքել. կիսել» ~ *այթ.* čalu- «կիսել»: *Հմմտ.* *հայ.* ցելում «ճղել, ճեղքել», ցեղ «մաս. տոհմ, ազգ» (g < *sk): *Թերևս նաև՝* ճիւղ «ոստ, մաս, բաժին», ճեղ-ք «արանք, բացվածք», (*բրբռ.*) ճղել «պատռել. զատել, առանձնացնել», շեղք «(դանակի) կտրոդ մաս», շիւղ/շիղ (*հմմտ.* ծիւղ, ծիղ, ծեղ «ծլել, բողբոջել») «ոստ, դալար ճյուղ» և այլն (*Илич-Сви́тыч*, 1971, 195–197, *հմմտ.* Ջահուկյան, 1987, 72, այլն 2010, 491, 493–94):

34. *Նոստր.* cūja «բույսի փուշ». *քարթվ.* cuxw- «բույսի փուշ. սայր» ~ *հե.* skei(H)- «բույսի փուշ» ~ *դրավ.* cī- «փուշ» (?) ~ *այթ.* čǐjՊ «բույսի փուշ. սայր»: *Հմմտ.* *հայ.* քիստ «հասկի ամեն մի հատիկի գլխին աճող բարակ փշանման կարծր մազիկ» (p < *sk-):

35. *Նոստր.* cur/ cor «կաթել. թափվել». *քարթվ.* cwar- / cur- «կաթել, կաթիլ» ~ *ուրալ.* cor «կաթել, հոսել» (?) ~ *դրավ.* cōr- / cūr- «կաթել, հոսել» ~ *այթ.* čur «կաթել, հոսել»: *Հմմտ.* *հայ.* ծոր «(հեղուկի) շիթ. (հնձածի) շերտ. լաս», ծորել «շիթով՝ շերտով թափվել» (< *հե.* ?), այլն (*բրբռ.*) ճիթել «շիթով հոսեցնել, չրոալ «հորդ հոսել», շո-իւղ/շո-իւնջ «ուժեղ ձայն», շառ-աչ(յուն) «ուժեղ՝ աղմկալից ձայն» (< *հե.* ?):

37. *Նոստր.* Պյա «շողալ». *սեմ.-քամ.* s(j) «լուսավոր» ~ *հե.* sOeih «շողալ, թույլ լույս տալ. ստվեր» ~ *ուրալ.* śŷjՊ շողալ, լույս տալ ~ *դրավ.* [cāj «փայլ»]: *Հմմտ.* *հայ.* ցայ-ել «մաքրաջրել. պարզաջրել» (?) (g < *sk-):

38. *Նոստր.* cw «կանչել, գոռալ. խոսել»(?). *սեմ.-քամ.* sw- «գոռալ» ~ *քարթվ.* [cw- «ասել»]: *Հմմտ.* *հայ.* (*բրբռ.* ?) ճվալ «ճչալ, կանչել», ճվճվալ «աղաղակել»/ծվծվալ «ծլվալ. բարակ ճչալ», սվսվալ «թույլ ձայն հանել», այլն գվգվալ «աղաղնու մի տեսակ ձայն հանելը» և այլն:

41. *Նոստր.* čapʰa «խփել. կտրել». *սեմ.-քամ.* [sP- «խփել. հարվածել»] ~ *հե.* skep- «ճեղքել, ճղատել» ~ *ուրալ.* čappa- «կտրել, խփել» ~ *դրավ.* [cava- «կտրել»] ~ *այթ.* čap(a)- «խփել. կտրել»: *Հմմտ.* *հայ.* կոփեմ «խփել, հարվածել» (*հմմտ.* «Կոնել կոփել գողունն Երուանդայ արքայի» - «Երվանդ արքայի դուռը թակել». *Խոր.*, 2, ԿԵ):

43. *Նոստր.* čuH «նայել». *քարթվ.* ciew-/ciaw-/ciw- «աչքը վրան պահել. հսկել» ~ *հե.* (s) keuH - «նայել» ~ *դրավ.* cū-(r) - «նայել»: *Հմմտ.* *հայ.*

¹² Ի տարբերություն Յու. Պոկորնու (տե՛ս J. I. Pokorny. Նշվ. աշխ., էջ 128–129)՝ գտնում են, որ «*հե.-ում* *bher- («երեխա, զավակ») հիմքը, ըստ երևույթին, բաղադրվել (կոնտամինացվել) է *bher- («վերցնել կրել») հիմքի հետ (տե՛ս բառահոդված 8): Նման բաղադրությունը հեշտ է «կրել» «պտուղը կրել, հղի լինել» «ծնել. Ծննդաբերել» (բառացի՝ «բերել») իմաստային տեղաշարժի հնարավորության դեպքում. այն արտացոլված է *հայ.* բեր, հուն. φέρμα «պտուղ», միդ. birit «մայր խոզ», գերմ. *beran «բերել. Ծնել», «առաջ բերել՝ արտադրել, ծննդաբերել» տիպի կազմություններում» (*Илич-Сви́тыч*, 1971, 194):

gnjg (gnig-ան-եմ) «*ցույց տալ*» (ենթադրյալ *skeu-skō «նայել») (Иллич-Свитыч, 1971, 202–203, *հմմտ.* Ջահուկյան, 1987, 72, *այլն*՝ 2010, 744):

44. Նոստր. *cel* «*ցատկել*». *սեմ.-քամ.* 1- «*ցատկել*»(?) ~ *հե.* (s)Oel- «*ցատկել*» ~ *ուրալ.* *cel-* «*ցատկել*» ~ *դրավ.* [cEl-ai «*աղբյուր, ջրվեժ*»](?) ~ *ալթ.* [č(e)l- «*կաղալ. գայթեկ*»]: *Հմմտ.* *հայ.* քայլ «*ոտքի մեկ շարժում. քայլվածք*»(?):

48. Նոստր. *-Či* (*սաստկ.-բազմ. ածանց*). *հե.* *-sO-* (*նույնը*) ~ *ուրալ.* *-če-* (*նույնը*) ~ *ալթ.* *-či-* (*նույնը*): *Հմմտ.* *հայ.*-(նյ)ց- //- (նու)ց- (*պատճառ. ածանց*) (*հմմտ.* *խեթ.* -šk-, *օրինակ*՝ *ar-šk-* «*(հաճախակի) շարժվել*»):

50. Նոստր. *čiru* «*թարախ, շարավ. խյուս*». *սեմ.-քամ.* [j)r «*թաց, կղկղանք*» ~ *հե.* (s)ter- «*խյուս. թարախ, կղկղանք*» ~ *ալթ.* *čirš-* «*հոտել, նեխել*»: *Հմմտ.* *հայ.* թոբ- (*թոբել*) «*ծորել՝ հոսել (մի բան)*», թար-ախ «*շարավ, թարախ*» (Иллич-Свитыч, 1971, 207): *Այլն*՝ *շար-ալ* «*թարախ*», *թերես (բրբռ.)* ցեռ «*(հեղուկ) կղկղանք*»(?):

53. Նոստր. *čAr* «*կտրել*». *սեմ.-քամ.* *čr-* «*կտրել, ճեղքել. սուր՝ կտրող քար*» ~ *քարթվ.* *čer-/čar-* «*կտրել, սղոցել*» ~ *դրավ.* *car-* «*ճեղքվել, կիսվել. երկատվել*». *Եթե հե.* **(s)ker-* «*կտրել*» // *նոստ.* *čAr* «*կտրել*» (?) (Иллич-Свитыч, 1971, 209): *Հմմտ.* *հայ.* *քեր-եմ* «*քերել*», *քեր-թ(ել)* «*մաշկել*», *շեր-տ(ել)* «*կիսել, շերտել*», *ջար-դ(ել)* «*կտոր-կտոր ա-նել*»(?). *Թերես նաև շոբ-թ(ել)* «*փախցնել*», *ձոռ-թ(ել)* «*բաժանել, հեռացնել*» և *այլն*:

58. Նոստր. *ČalHa* «*լայն*». *հե.* *stelh-* «*լայն*» ~ *ալթ.* [čāl(a) «*լայն, ընդարձակ*»]: *Հմմտ.* *հայ.* առա-ստաղ (<*stl-no-) *տանիք*, *լայն* «*լայն*» (*բաղադր. *lai- < *stlā-to*) (Иллич Свитыч, 1971, 212)¹³:

61. Նոստր. *daŋa* «*մոտ(իկ)*». *սեմ.-քամ.* *d* «*մոտ(իկ)*» ~ *ուրալ.* *taka* «*հետևի (կողմ)*», *taka-na* «*հետևից*» ~ *ալթայ.* *daka-* // *daga-* «*մոտ, մոտենալ. հետևել (մեկին)*»: *Հմմտ.* *հայ.* *տակ* («*մոտ. տակը, տակի՝ ներքևի կողմը*») < *իրան.* *tak* «*տակ. ներքևի կողմ*» (*Ջահուկյան, 2010, 718*)¹⁴:

62. Նոստր. *dalq(u)* «*ալիք*». *սեմ.-քամ.* *dl* «*ալեկոծվել, պղտորել*» ~ *հե.* [dhelH- «*ծով*»? ~ *դրավ.* *talla-* «*ալլալվել, անհանգստանալ*» ~ *ալթ.* *d(ä)lu-* // *dōli-* «*ալիք*»: *Հմմտ.* *հայ.* (*բրբռ.*) *թալ-ցնել* «*(նորածնի) լեզուն կուլ գնալը՝ շնչարգել լինելուց, ալլալվել-լը*»(?):

64. Նոստր. *dEwHi* «*տատանել, փչել*». *հե.* *dheuH-* «*տատանել, ցնցել, փչել*» ~ *ալթ.* *dEbi-* «*թափահարել, փչել*»: *Հմմտ.* *հայ.* *դե-դե-իմ* (*դե-դե-իմ) «*տարուբերվել, ճոճվել*» (Иллич-Свитыч, 1971, 217–218, *հմմտ.* Ջահուկյան, 1987, 72, *այլն* 2010, 191):

65. Նոստր. *-di* (*անցյ. ժամ. կազմիչ*). *քարթվ.* *-di* (*անկատ. ժամ. կազմիչ*) ~ *դրավ.* *-tt-/t-* (*պրետերիտի կազմիչ*) ~ *ալթ.* *-di* (*պրետերիտի կազմիչ*): *Հմմտ.* *հայ.* *-յ-* (*ըստ Ա-ճաղյանի*) *երթա-յ-ի* «*գնում էի*», *բերեի* (<*բերե-յ-ի) «*բերում էի*» (*հմմտ.* Ջահուկյան, 1987, 70–71):

¹³ Միաժամանակ գտնում են, որ հայերենը հնարավորություն է տալիս նաև վերականգնելու *հե.* *stl-no- նախաձև:

¹⁴ H. H ü b s c h m a n. Armenische Grammatik. Leipzig, 1897, S. 250.

66. Նոստր. did «մեծ» (?). սեւ.-քաւ. d(j)d «մեծ. հաստ» ~ քարթվ. did «մեծ»: Հմմտ. հայ. տի- (տի-կին. տի-եզերք, *տի-այր> տեր և այլն) (հմմտ. Ջահուկյան, 1987, 70–71, այլն՝ 2010, 728)¹⁵:

67. Նոստր. diga «ձուկ». սեւ.-քաւ. [d(j)g «ձուկ»] ~ հե. dhoh-u-H «ձուկ» ~ ալթ. [d/iga- «ձուկ»]: Հմմտ. հայ. ձու-կն «ձուկ» (ինչպես որ մու-կն և այլն) (Иллич-Сви́тыч, 1971, 219, հմմտ. Ջահուկյան, 1987, 71):

68. Նոստր. dila «արևի լույս». քարթվ. [dila «առավոտ»]? ~ հե. dhel- «արև, լուսավոր» ~ ալթ. *dila «արև, արևի տարի»: Հմմտ. հայ. դեղին (սեռ. հոլ. դեղ-նոյ) «դեղին, գունատ՝ դալուկ» (Иллич-Сви́тыч, 1971, 219–220):

69. Նոստր. diq «զետին, հող». քարթվ. diqa «զետին, կավ» ~ հե. dhohem- «զետին, հող»: Հմմտ. հայ. տիղ-մ //տեղ-մ «ջրի բերած նստվածք, տիղմ», (բրբռ.) տիլ «ցեխ, տիլ», տլ-ողլ «ջրոտ, ոչ սրսուտ (կարտոֆիլ և այլն)»:

72. Նոստր. duł «ծայր, վերջույթ». քարթվ. dud- «ծայր, վերջույթ» ~ ուրալ. tuδ'ka «ծայր, վերնամաս» ~ դրավ. tut «վերջույթ, ծայր»: Հմմտ. հայ. տուտն (տտուն) «ծայր, վերջույթ՝ պոչ» (<հե. *dud-) և այլն (հմմտ. Ջահուկյան, 1987, 71, այլն՝ 2010, 735):

73. Նոստր. dṣnga «հանգիստ լինել, լռել». սեւ.-քաւ. d(w)m «հանգիստ լինել, լռել» ~ քարթվ. [dum- «լռել»] ~ ալթ. dṣṅṣ «հանգիստ նստել, լռել»: Հմմտ. թերևս հայ. (բրբռ.) դում «մունջ. լուռ», դինջ (*դի-նջ) «հանգիստ. անտարբեր»(?):

75. Նոստր. dṣṣ «տեղավորել». սեւ.-քաւ. dṣ «տեղավորել» ~ քարթ. d- «տեղավորել» ~ հե. dheñ- «տեղավորել, դնել»: Հմմտ. հայ. դնեմ [դի(ն)եմ] «դնել», եդ-ի, եդ (անցյ. կտր. եզ. 1-ին, 3-րդ դ.) «դրեց», դի ը (հրավ. եզ. 2-րդ դ.) (Иллич-Сви́тыч, 1971, 224, հմմտ. Ջահուկյան, 1987, 72, այլն՝ 2010, 201):

76. Նոստր. dw «հիվանդանալ. մեռնել». սեւ.-քաւ. dw- «հիվանդ լինել. մեռնել» ~ հե. dheu- «մեռնել. ուշաթափվել»: Հմմտ. հայ. դի (սեռ. հոլ. դի-ոյ.) «դիակ», թերևս նաև ցաւ «հիվանդություն» (Լսսոֆ-հՉՌՅօֆ, 1971, 224–225, հմմտ. Ջահուկյան, 1987, 72, այլն՝ 2010, 198, 742):

78. Նոստր. gara «ծակող ճյուղ. փուշ». հե. gher-, gherñ-/ghreñ- «փուշ, սայր, ճյուղ» ~ ուրալ. kara «փուշ, ճյուղ, փշատերև բույս» ~ դրավ. kar(a) «փուշ, սայր» ~ ալթ. gara «սայր, ճյուղ, փշատերև բույս»: Հմմտ. հայ. (բրբռ.) կառ (թերևս նաև կանգառ) «մի տե-սակ փշոտ՝ ոչ շատ բարձր բազմամյա բույս, կլորավուն մանուշակագույն թավ ծաղ-կով»:

¹⁵ Ինչպես տեսնում ենք, բացակայում է համեմատությունը հնդեվրոպականի հետ, սակայն Ջահուկյանը, հավանաբար, նկատի ունենալով Բլիչ-Սվիտիչի մեկ այլ աշխատության տվյալները, իր գրքում անցկացնում է այդ համեմատությունը՝ տողատակին նշելով հետևյալը. «Բլիչ-Սվիտիչը տալիս է միայն բալթիական ձևերը՝ չիմանալով հայերենի մասին» (Ջ ա հ ու կ յ ա ն, 1987, նաև՝ 2010):

79. Նոստր. gṽndu «արու, որձ». զրաւ. kaṽṽ- «արու, որձ» ~ ալթ. gṽndṣ «արու, որձ»: Հմմտ. հայ. թերևս (բրբռ.) քոնթ «արու, որձ», քոնթ(ի) «արուի՝ որձի կարիք ունեցող» (< հե.?):

80. Նոստր. gṽi «ձեռք». հե. ohes- «ձեռք» ~ զրաւ. kac- «ձեռք» ~ ուրալ. kṽte- «ձեռք»: Հմմտ. հայ. ձեռ-ն (հոգն.՝ ձեռք) (Լսմի-հՉՌՅօփ, 1971, 227, հմմտ. Ջահուկյան, 1987, 71, այլն՝ 2010, 475):

82. Նոստր. gE(hr)a «արշալույս». սեւ.-քամ. ghr «արևի լույս, օր» ~ հե. oherh-/ohreh- «արշալույս. լուսանալ» ~ ալթայ. *gEra «արշալույս. ցայգ»: Հմմտ. հայ. ճառագ- «արշալույս», ճառագ-(ել) «լույս տալ» (թերևս նաև ճրագ):

84. Նոստր. gi(ʔ)u «հարթ. փայլուն». սեւ.-քամ. [gl «ճաղատ»] ~ քարթվ. [glu «հարթ»](?) ~ հե. ohelh⁰-/ohleh⁰- «սպիտակավուն, փայլուն», ghleh⁰-dh- «հարթ, փայլուն» ~ ուրալ. [kī/ʔ/ṽ «հարթ և փայլուն»] ~ ալթ. gīlu-/ gīla- «հարթ և փայլուն»: Հմմտ. հայ. թերևս (բրբռ.) գիլա(յ) «(ոչ սև խաղողի) հատիկ» (?):

87. Նոստր. gop^a «դատարկ, սնամեջ». սեւ.-քամ. gwP «դատարկ, սնամեջ» ~ քարթվ. kwab- «քարայր, փոս»(?) ~ հե. geup- «սնամեջ տեղ, փոս» ~ ուրալ. koppa «դատարկ, սնամեջ. զանգ» ~ ալթ. goba-/gobi- «դատարկ, սնամեջ. խորք»: Հմմտ. հայ. գուր «փոս. փոսորակ», (բրբռ.) կուր-ի «դազաղ» (զ/կ տարբերակում) (?):

91. Նոստր. gur^Λ «կուլ տալ». սեւ.-քամ. g(w)r- «կուլ տալ, կում» ~ հե. g^uerh^u- (նաև *g^uer-) «կլանել. կոկորդ» (?) ~ ուրալ. kurk «կում» ~ զրաւ. kur «կում, կոկորդ»: Հմմտ. հայ. (առք.) կեր-ի (ե-կեր) «կերա», կեր, կերակուր «ուտելիք», կոկորդ (< *կոր-կոր-դ. հմմտ. սոսորդ < *սոր-սոր-դ «մակկոկորդ». կ/ս տարբերակում) «կոկորդ» (Иллич-Сви-тыч, 1971, 235–236, հմմտ. Ջահուկյան, 1987, 72, այլն՝ 2010, 400, 416, 688):

94. Նոստր. gUI' «կլոր. գունդ». սեւ.-քամ. g(w)l կլոր. գունդ. գլուխ» ~ քարթվ. gwar-/gur- «կլոր. գլորվել» ~ հե. ghel- «կլոր ելուստ, գլուխ»(?): Հմմտ. հայ. գլուխ «գլուխ» (Иллич-Сви-тыч, 1971, 237–238):

95. Նոստր. gUr «շիկացած ածուխ». սեւ.-քամ. g(w)r «կրակ. ածուխ» ~ հե. g^uher- «այրել, տաք, շիկացած ածուխ» ~ ալթ. gur(ṽ) «շիկացած ածուխ, բոնկվել»(?): Հմմտ. հայ. ջեռ (ջեռ-ն-ուլ) «տաք, ջերմ» (Иллич-Сви-тыч, 1971, 239):

97. Նոստր. garu «կենանալ, կորանալ»(?). քարթվ. yrek(w)- «կենանալ, կորանալ. ուլորվել» ~ հե. herk⁰- «կոր, կեռ. ճկուն»: Հմմտ. հայ. կորճ «ընկույզի կեղև»(?):

100. Նոստր. haw «(բուռն) ցանկանալ». սեւ.-քամ. hw(j) «(բուռն) ցանկանալ» ~ հե. he- «(բուռն) ցանկանալ» ~ զրաւ. [āw- «(բուռն) ցանկանալ»]: Հմմտ. հայ. ալիւն «ցանկություն. հակում» (Иллич-Сви-тыч, 1971, 241–242), այլն հաւան «հավանություն, հավանող», աւեալ «խելագար, ցնորված» (հմմտ. Ջահուկյան, 1987, 113, այլն՝ 2010, 453):

101. Նոստր. այս «ապրել, կենսական ուժ». սեւ.-քամ. jw «ապրել» ~ հե. hepu «կենսական ուժ» ~ ալթ. ՓյՖ «կենդանի, կյանք»(?): Հմմտ. հայ. թերևս հա(j) «այո՛. այդպե՛ս (է)», ալ(n) «հա՛. այդպե՛ս (է)»(?):

103. Նոստր. Haja «հալածել, հետապնդել». հե. [Hei- «հալածել. չարիք պատճառել»] ~ ուրալ. aja- «հալածել, հետապնդել. հեռուն գնալ» ~ ալթ. aja- «որս անել, զագանին ձեռքը գցել»: Հմմտ. հայ. հայ-հոյ-ել (արմ. կրկն. 'ա//ոն ձայնավորմամբ) «անարգել, վիրավորել. չարախոսել, հիշոց տալ»(?):

106. Նոստր. Henka «վառվել». հե. Heng- «վառվել» (H3g-n-i- «կրակ» և այլն) ~ ուրալ. enk- «վառվել»: Հմմտ. հայ. (բրբռ. *անձ-ող) անձող «ածուխ. կրակ» (Ջահուկյան, 1987, 141, 183 և այլն): Տե՛ս նաև հե. *3k'ni- «կրակ». հինդկ. Agni- «կրակ», «կրակի աստված», լատ. ignis «կրակ. երկնային լուսատու. կայծակ», հսլավ. ognĭ «կրակ» և այլն¹⁶:

107. Նոստր. HerՊ «փուլ գալ, քանդվել». հե. her- «փուլ գալ, քանդվել» ~ ուրալ. erՊ- «փուլ գալ, քանդվել. մաս» ~ դրավ. i□(a)- /e□- «կոտրվել» ~ ալթ. [ՊրՖ- «փլուզվել. հալ-չել»]: Հմմտ. հայ. հեռ-ի /հեռ-ու «զատված, հեռացած, մաս եղած», թերևս նաև հայ. (բրբռ.) հիռի ~ (կռչ.) «ռչխար(ներ)ին հեռացնելու՝ քշելու ձայն» (?) և այլն:

108. Նոստր. HerՊ «արու (կենդանի)». դրավ. ēr «արու» ~ ալթ. ērՊ «արու, տղամարդ»: Ի հավելումն նաև հե. *hers- / ħrs- «արու», որից հայ. առն (սեռ. հոլ. առին) «արու (վարի) ռչխար» («արական» իմաստային հատկանիշով) (Иллич-Свитыч, 1971, 247–248, հմմտ. Ջահուկյան, 1987, 71, այլն՝ 2010, 75):

111. Նոստր. Hi (անց. ժամ. մասնիկ). սեւ.-քամ. (H)j (նույնը) ~ քարթվ. -e/-i (առք. մասնիկ) ~ հե. he- (առք. մասնիկ՝ աուզմենտ) ~ ուրալ. - □- (անց. ժամ. մասնիկ) ~ դրավ. - i- (նույնը): Հմմտ. հայ. ե-//է- (ե-բեր «բերեց» // է-առ «առավ») (հմմտ. Иллич-Свитыч, 1971, 249–250):

113. Նոստր. Ho□i «սուր. ծայր, սայր». հե. HeO - «սուր. ծայր, սայր» ~ ալթ. oki «սլաք, վերջույթ»: Հմմտ. հայ. աւ-եղն «ասեղ», թերևս նաև սա-յր (*թրի բերան) /ծա-յր «եզր, վերջ» (արմատի շրջումով) (Иллич-Свитыч, 1971, 251–252, հմմտ. Ջահուկյան, 1987, 72, 131, 268, այլն՝ 2010, 76, 358–359, 666):

114. Նոստր. Homsa «միս». հե. (H)mēms- «միս» ~ ուրալ. omśa «միս» ~ դրավ. Ծрс- «միս»: Հմմտ. հայ. միս «միս» (ԼսսՌփ-հՉօՑՌփ, 1971, 252–253, հմմտ. Ջահուկյան, 1987, 71, այլն՝ 2010, 527):

116. Նոստր. HorՊ «վեր ելնել». հե. h^uer- «վեր ելնել, շարժ(վ)ել» ~ դրավ. ē- «վեր ելնել» (?) ~ ալթ. or(a) - /ΦrՊ «վեր ելնել, հառնել, մտնել»: Հմմտ. հայ. յ-առ-նեմ «վեր ելնել, հառնել», յորդորեմ «հորդորել», այլն

¹⁶ Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, т. 2 (*այսուհետև՝* Гамкрелидзе, Иванов, *աղբյուրը կնշվի մեջբերմանը կից*). Тбилиси, 1984, с. 274 и далее.

ար-մ-ատ «ծառի ընդգետնյա մաս» (հայ. առ- <*r) (Иллич-Свистыч, 1971, 254–255, հմմտ. Ջահուկյան, 1987, 71, այլն՝ 2010, 93, 548, 555):

117. Նոստր. Hos «հացենի, հացի»(?). հե. h^{es}- «հացենի, հացի» ~ ուրալ. oška «հացենի, հացի»: Հմմտ. հայ. հաց-ի/հաց-ենի «մի տեսակ ծառ» (Иллич-Свистыч, 1971, 254–255, հմմտ. Ջահուկյան, 1987, 72, այլն՝ 2010, 453)¹⁷:

118. Նոստր. Hua «աչք. տեսնել». հե. h^{ek}-/heuk- «աչք. տեսնել» ~ ալթ. uka- «նկատել, հասկանալ»: Հմմտ. հայ. ակն «աչք» (սեռ. հոլ. ակն «աչքի») (Иллич-Свистыч, 1971, չ3 255–256, СШ մտ. Ջահուկյան, 1987, 71, այլն՝ 2010, 30–31)¹⁸:

121. Նոստր. a (ցուց. դեր.՝ հեռու առարկա նշող) (?). սեմ.-քամ. /a (ցուց. դեր.) ~ քարթվ. (h)a (ցուց.դեր.՝ մոտ առարկա նշող) ~ հե. he-n- (ցուց. մասն.)¹⁹ ~ ուրալ. a-/o- (ցուց. դեր՝ հեռու առարկա նշող) ~ դրավ.՝ (ցուց. դեր.՝ հեռու առարկա նշող) ~ ? ալթ. [a-/o- «այն. նույն»]: Հմմտ. հայ. (h)ա-ն- //ա-ն-//ը-ն- (օր.՝ հան-դէպ, ան-ձեռոցիկ, ըն-ձիւղ և այլն) (?):

122. Նոստր. a (բայ. հիմք. մասնիկ) (?). սեմ.-քամ. ' - /' (բայանվ. կազմիչ) ~ քարթվ. (h)a- / -a (բայանվ. կազմիչ) ~ հե. - o- (բայանվ. ածանց) ~ դրավ. -a (բայանվ. և դերբ. ածանց): Հմմտ. հայ. - n- (բեր-ն-յ «բերածի, ստացածի» և այլն: Ի հավելումն նշվում է, որ հե. *o-ն այդ խմբի լեզուներում ամենատարածված բայանվանական մասնիկն է. հե. *bher- «տանել, բերել» > *bhor-o- (հմմտ. հինդկ. bhnras «որս. ավար», հուն. φόρος «եկամուտ. օգուտ» հայավ. сѣ-богъ «հավաքում, հավաքելը» և այլն) (տե՛ս Иллич-Свистыч, 1971, 258–259):

124. Նոստր. amu «առավոտ, ցերեկվա լույս»(?). սեմ.-քամ. 'mr «օրվա լույս, տեսնել» ~ հե. hēm- «օր» ~ ուրալ. am/-oma- (<*amo-) «առավոտ»: Հմմտ. հայ. աւր (սեռ. հոլ. աւուր < *aumr < *amur) «օր» (Иллич-Свистыч, 1971, 260–261, հմմտ. Ջահուկյան, 1987, 71):

125. Նոստր. anq «շնչել»(?). սեմ.-քամ. ['n «շունչ առնել՝ քաշել»] ~ հե. henH- «շնչել»: Հմմտ. հայ. (բրբռ.) հան-զ «շունչ. շունչ առնելը», թերևս նաև հուն.-չ «շունչ, շնչելը»:

127. Նոստր. aSa «կրակ»(?). սեմ.-քամ. 'š «կրակ» ~ հե. hes- «օջախ. չորացնել» ~ ալթ. [aSa- «այրվել»]: Հմմտ. հայ. աճիւն (հայ. ճ < *sg-) «մոխիր», այլն ազ-ազ-իմ «չորանալ» (արմատի կրկն.) (Иллич-Свистыч, 1971, 262–263, հմմտ. Ջահուկյան, 1987, 72, այլն՝ 2010, 22):

130. Նոստր. ej «գալ»(?). սեմ.-քամ. 'j «գալ» ~ հ.-ե. hei- «գնալ» ~ դրավ. ej- «գնալ. մոտենալ» ~ ալթ. i- «մոտենալ. մտնել»: Հմմտ. հայ. էջ (ՊՅՁ), իջանեմ «իջնել» (ներկ. ժամ. էգ. 1-ին դ.) (Ջահուկյան, 1987, 72):

¹⁷ Նշվում է, որ «ձայնավորական համակարգը պարզ չէ. հնարավոր է ծագում հե. š-k-ից՝ երկրորդային հ-ով» (նույն տեղում):

¹⁸ Նշվում է, որ «պարզ չէ-ն՝ սպասելիք-ի փոխարեն» (նույն տեղում):

¹⁹ Հե. *n-ն դիտվում է «սաստկացուցիչ տարր». հմմտ. հուն. ἄν «զուցե, թերևս», «մյուս անգամ», լատ. an «այո», «զուցե. թերևս» (նույն տեղում):

131. Նոստր. ? elA «ապրել». սեմ.-քամ. ' (j)l «լինել, գոյություն ունենալ. (ագ-գա)բնակչություն» ~ ուրալ. eՊ- «ապրել» ~ դրավ. il /? el «ապրելու տեղ» ~ ալթ. el «բնակչություն. խաղաղ կեցություն»: Հմմտ. հայ. թերևս եղա-նիմ «լինել, գոյություն ունենալ»:

132. Նոստր. esA «տեղում լինել. նստակյաց դառնալ»(?). սեմ.-քամ. ' (j)š / ' (j)t «տեղ հասնել. տեղում լինել» ~ հե. hes- «լինել, h s «նստել»/es- «լինել» ~ ուրալ. esA «տեղում մնալ. տեղ. կայան»: Հմմտ. հայ. ե-մ «կամ. լինել» (Иллич-Свитыч, 1971, 268-269, հմմտ. Ջահուկյան, 1987, 72, այլն՝ 2010, 216):

135. Նոստր. ili «եղջերու»(?). սեմ.-քամ. [j]l «եղջերու» ~ հե. hel-n- «եղնիկ, եղջերու» ~ դրավ. il «եղջերու» ~ ալթ. ili «եղջերու. ցիռ»: Հմմտ. հայ. եղն (սեռ. հոլ. եղ-ին) «եղջերու» (Иллич-Свитыч, 1971, 272-273. հմմտ. Ջահուկյան, 1987, 71):

136. Նոստր. itՊ «ուտել»(?). սեմ.-քամ. t(j)l it «ուտել» ~ հե. hed- «ուտել» ~ ալթ. [ida- «ուտել»]: Հմմտ. հայ. ուտ-եմ (ներկ. եզ. 1-ին դ. < * öd-) «ուտում եմ» (Иллич-Свитыч, 1971, 273-274, հմմտ. Ջահուկյան, 1987, 72):

137. Նոստր. al' «անցկացնել (սարն այն կողմ)». սեմ.-քամ. 'l- «անցնել սարից, ելնել. բարձունք» ~ հե. hel- (?) «մյուս կողմից, դեպի այն կողմ» ~ ալթ. al' a «անցկացնել (սարն այն կողմ)»: Հմմտ. հայ. այլ «մյուս. այլ» (հուն. ἄλλος «մյուս. այլ» լատ. alius «այլ, մյուս» և այլն) (Иллич-Свитыч, 1971, 275-276):

139. Նոստր. Eξu «ջուր». սեմ.-քամ. 'q(w) «ջուր» ~ հե. hek[□]-ջուր. խմել²⁰: Հմմտ. հայ. թերևս կու-մ/իտու-մ «ումս, կում. խմելը» (խեթ. eku-, լուվ. aku-, պալ. ahu- «խմել», լատ. aqua «հոսք, ջուր» և այլն):

140. Նոստր. AL «կիզել (զոհը)». սեմ.-քամ. 'l «կիզել զոհը. բոց» ~ հե. Hel- «կիզել զոհը. հուրհրալ»(?): Հմմտ. հայ. յաղ-թ «շատ. հսկա, քաջ. հաղթություն» (երե նախնականը դիտվի հաղթության համար զոհաբերումը՝ «զոհ մատուցել՝ ի նշան հաղթության»(?):

141. Նոստր. Λ «ճյուղ». սեմ.-քամ. 'd «ծառ. ճյուղ» ~ հե. H/o/sd-o- «ճյուղ»: Հմմտ. հայ. ոստ «ոստ, ելունդ. ցից» [հուն. ζος, (էդ. Πσδος), գոթ. asts, հվգերմ. ast, հանգլ. öst «ե-լուստ (ծառի վրա)»] (Иллич-Свитыч, 1971, 276-277):

145. Նոստր. jar «փայլել, ճառագել». դրավ. ēr-/eri- «փայլել, բոցկլտալ» ~ ալթ. jaru- «լույս տալ, փայլել»(?): Հմմտ. հայ. թերևս ճառ-ագել «շողալ, փայլել. լույս տալ»:

149. Նոստր. -jE (բղձ. եղ. ձևորդ). հե. -i-, -ieh- (բղձ. եղ. մասնիկ) ~ ալթ. -jE- [բղձ. (վոլյունտ,) եղ. մասնիկ]: Հմմտ. հայ. թերևս -ի- // -յ- [բուն կամ աթեմ. անկատ. գործառույթով՝ բերեի (<*բերե-յի) «բերում էի»

²⁰ Թերևս նաև դրավ. āk «ճահիճ» (տե՛ս նույն տեղում):

(*հմմտ. հինդկ. bhñret, հուն. φέροι «կրելի, տանելի», գոթ. baþrai, այլև հսլավ. ѡуѣѡ «տանելի, վերցնելի»*) (*Иллич-Свитыч, 1971, 282*):

150. Նոստր. -j «ածակ. ածանց». սեմ.-քամ. -ij «ածակ. ածանց» ~ հե. -ro-/i-ro- «ածակ. ածանց» ~ ուրալ. -j «ածակ. ածանց», -ja/jՊ «անվ. և դերբ. ածանց» ~ դրավ. -i «կոնվերբի ածանց» ~ ալթ. -i «անվ. և դերբ. ածանց»: Հմմտ. հայ. բար-ի, կոգ-ի «(կովի) կարագ» (*հմմտ. Ջահուկյան, 1987, 70*):

156. Նոստր. kal՝ «կաշին՝ կեղևը պոկել, քերթել». հե. gol- «մերկ, ճաղատ՝ անմազ» ~ ուրալ. kal՝ «բարակ մաշկ, մերկ, հարթ» ~ դրավ. kaՓ - «մաշկել, պոկել» ~ ալթ. Kal (i)- «մաշկել. կեղև, մերկ»: Հմմտ. հայ. ճաղատ «անմազ. ճաղատ», թերևս նաև ճակ-ատ «լերկ, անմազ. ճակատ»:

157. Նոստր. kamu «բռնել, սեղմել». սեմ.-քամ. km- «վերցնել, սեղմել» ~ հե. gem- «բռնել, սեղմել» ~ ուրալ. kama-lA/ koma-rA (<* kamo-) «բռն, ամ» ~ դրավ. kamA- «բռնել, պահել» ~ ալթ. kamu- «բռնել, սեղմել»: Հմմտ. հայ. ճմ-լեմ «սեղմել, ճզմել, ճմլել», թերևս (բրբռ.) ճմռ-ել «սեղմել, ճզմել» (< ճմռոտ «յուղի մեջ ճզմած՝ ճմլած տաք հաց»), թերևս նաև ծմր-ել (ծմր/լկտալ) «(մարմնով) ճմլվել՝ ոլորվել» և այլն (*Иллич-Свитыч, 1971, 290-291, հմմտ. Ջահուկյան, 1987, 72*):

159. Նոստր. kar/kur «կռունկ». սեմ.-քամ. [k(w)rk «կռունկ, ձկնկուլ(?)» ~ հե. gerH- «կռունկ» ~ ուրալ. karke/kurke «կռունկ» ~ դրավ. kor-/kur- «կռունկ» ~ ալթ. [kara-/kura- «կռունկ(?)»]: Հմմտ. հայ. կռունկ «խորդ, կռունկ» (*Иллич-Свитыч, 1971, 292-293, հմմտ. Ջահուկյան, 1987, 71*):

162. Նոստր. kՊIU «խնամակցուհի». սեմ.-քամ. [kl(l) «եղբոր կին. հարս»] ~ քարթվ. [kal-»կին»] (?) ~ հե. ց̌āō «եղբոր կին» ~ ուրալ. kՊIՖ «յուրային (ամուսնու քույր՝ տալ. եղբոր կին և այլն). քրոջ ամուսին» ~ դրավ. [kal- «հորեղբոր կին»] ~ ալթ. kՊli(n) «կրտսեր եղբոր կամ որդու կին. քրոջ ամուսին»: Հմմտ. հայ. տալ «ամուսնու քույր, տալ», թերևս նաև (բրբռ.) ձալն/զալն «հոր՝ մոր քույր» (տե՛ս *Иллич-Свитыч, 1971, 292-93, հմմտ. Ջահուկյան, 1987, 71*)²¹:

163. Նոստր. kEN «զիտենալ». սեմ.-քամ. k(j)n «զիտենալ. ճանաչել» ~ քարթվ. gen- «խմանալ, հասկանալ, զգալ» ~ հե. ց̌enh^u-ց̌neh^u- «զիտենալ»: Հմմտ. հայ. ճանաչեմ («ճանաչեմ») «ճանաչել, իմանալ», ծանեայ (անց. կատ. եզ. 1-ին դ.) «ճանաչեցի», այլն ծան-ալթ «ճանաչած, իմացած» և այլն (*Иллич-Свитыч, 1971, 296-97, հմմտ. Ջահուկյան, 1987, 72, այլն՝ 2010, 359, 488*):

164. Նոստր. k(iH) «երգել». հե. (g)eiH- «երգել. գոռալ, ճչալ» ~ ուրալ. kīγA- «կտղուցել, երգել»: Հմմտ. հայ. ձի-չ «գոռոց, ճիչ», թերևս նաև ծի-կ

²¹ Գտնում են, որ հայ. ծալ-ի փոխարեն տալ-ը արդյունք է տալգր «ամուսնու եղբայր» բառի ազդեցության, որն անհավանական է (տե՛ս նույն տեղում):

(ծիկ-ծիկ) «հավին, ճտերին կանչելու ձայն», ծիւ- «ճնճողուկի ձայն» (հմմտ. ծիվ-ծիվ անել «ծվծվալ, ծլվլալ») և այլն:

165. Նոստր. kirH «հին». հե. ġerH- «հին. զառամյալ» ~ ղրավ. [kir(a) «հին»](?): Հմմտ. հայ.ծեր «տարեց, ծեր» (Иллич-Свитыч, 1971, 297–298):

166. Նոստր. kiwi «քար». եւ. -քաւ.[kw «քար»] (?) ~ քարթվ. kw-a «քար» ~ ալթ. kiwe «քար»: Հմմտ. հայ. թերևս կաւ «նստվածքային ապար. շինանյութ»:

168. Նոստր. kojHa «ճարպոտ, առողջ». հե. g^ueih^u / g^uieh^u - «առողջ լինել. ապրել» ~ ուրալ. kōja «ճարպ, ճարպոտ»: Հմմտ. հայ. կեամ (<*g^uiɾ-ā-) «կենալ, ապրել», կեանք «ապրելը, կյանք», կենդանի «ապրող. կենդանի», կենսական «ապրելուն բնորոշ՝ անհրաժեշտ» և այլն (Иллич-Свитыч, 1971, 299, հմմտ. Ջահուկյան, 1987, 72, այլն՝ 2010, 396–97):

175. Նոստր. kŭjpa «հողերը ծալվել. ոսկրի ծռում»(?). հե. ġenu / ġneu «ծունկ» ~ ուրալ. kŭjpa-(rH) «արմունկոսկր. բազուկ» ~ ղրավ. կп «սալատ, կուզ»: Հմմտ. հայ. ծուն-(կ/զ)/ծուն-ր (հոգն.՝ ծունկ-ք) «ծունկ, ծնկներ» (Иллич-Свитыч, 1971, 304, հմմտ. Ջահուկյան, 1987, 71, այլն՝ 2010, 368):

178. Նոստր. kŭni «կին». սեւ. -քաւ. k(w)n / knw «կանանց խմբից մեկը. կին» ~ հե. g^uen- «կին» ~ ալթ. kŭni «կանանց խմբից մեկը. կին»: Հմմտ. հայ. կին (հոգն.՝ կան-այք) «կին» (Иллич-Свитыч, 1971, 306–307, հմմտ. Ջահուկյան, 1987, 71):

189. Նոստր. -ka (զոյ. փոքր. մասնիկ). քարթվ. -k- (-ak-, -ik-) (փոքր. մասնիկ) ~ հե. -k- (փոքր. մասնիկ) ~ ուրալ. -kka/-kkH (փոքր. մասնիկ) ~ ալթ. -ka/-kH (փոքր. մասնիկ): Հմմտ. հայ. (ի, ու, ա, ե)կ (իմա՝ փոքրիկ, արջուկ, գնդակ, տղեկ և այլն):

190. Նոստր. Uaba/Uap'a «բռնել». սեւ. -քաւ. qb- «բռնել, վերցնել, կծել» ~ քարթվ. Ub- «կծել» ~ հե. ghabh-/kap- «բռնել, վերցնել, պահել» ~ ուրալ. kappH «բռնել» ~ ղրավ. kavv-/kapp- «(բերանով) բռնել. ճանկել», kava- «բռնել» ~ ալթ. k^aaba-/k^aapa- «բռնել»: Հմմտ. հայ. կափ- (կափել «խփել, բախել», կափկափել «ատամները (ցրտից) իրար խփել» (արմատի կրկն.), կափուցանել «խփել, գոցել», կափարիչ //կափոյր «խուփ» և այլն), թերևս նաև խափ «որոգայթի մեջ բռնվել», խուփն «կափարիչ» և այլն:

196. Նոստր. ՄՊԸՊ «կտրել, կիսել». սեւ. -քաւ. qs «կիսել, խփել, կոտրել» ~ քարթվ. [kac1- «կտրել, կիսել, տրոցել»] ~ հե. Oes- «կտրել, կիսել» ~ ուրալ. k^oġġ / keġġ «դանակ, սայր» ~ ղրավ. kacc- «կծել, խայթել»(?) ~ ալթ. [k^oġsH- «կտրել, կիսել»]: Հմմտ. հայ. թերևս կէս- (կիս-ել «կես անել, կտրել», կիս-ատ «կեսը պակաս՝ կտրած») և այլն:

